ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N 1457-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

____ _____ 2025 թվականի N_____-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N 1457-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, ազգային անվտանգության ծառայության և պետական պահպանության ծառայության համակարգերի զինծառայողների, փրկարարական ծառայողների իրային ապահովության կարգը (չափաքանակները) սահմանելու մասին» N 1457-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2.3-րդ կետով՝

«2.3. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության ստորաբաժանումներում, ծառայության առանձնահատկություններով պայմանավորված, ծառայողների կողմից զինվորական համազգեստ կրելու հաճախականությունից ելնելով՝ սույն որոշման N 2.1 հավելվածի համաձայն պարտադիր զինվորական հանդերձանք ոչ մշտապես կրող սպաների և ենթասպաների հանդերձանքի կրման ժամկետները կրկնապատկվում են՝ ըստ Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության պետի կողմից սահմանած ցանկի։»:

2. Որոշման N 2.1 հավելվածում կատարել հետյալ փոփոխությունները և լրացումները.

- ուժը կորցրած ճանաչել N 1 չափաքանակի աղյուսակի 2-րդ, 3-րդ, 4-րդ,

6-րդ, 7-րդ, 9-րդ, 11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ, 17-րդ, 19-րդ, 22-րդ, 23-րդ, 25-րդ, 26-րդ, 27-րդ, 29-րդ, 30-րդ և 31-րդ կետերը.

- ուժը կորցրած ճանաչել N 1 չափաքանակի Ծանոթագրությունների՝ 1-ին և 3-րդ կետերը.
- N 2 չափաքանակի աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 29-35-րդ կետերով՝

«

29.	Կեպի գլխարկ	060	1 հատ	1
30.	Տակտիկական տաբատ (շալվար)	061	2 հատ	1
31.	Բաճկոն՝ սև գույնի	062	1 հատ	3
32.	Դասական կոստյում	063	2 հատ	3
33.	Տակտիկական կոշիկ	064	1 զույգ	2
34.	Երկարաթև սև վերնաշապիկ	065	1 հատ	1
35.	Կարճաթև սև մարտավարական վերնաշապիկ (պոլո)	066	1 հատ	1

».

- ուժը կորցրած ճանաչել N 2 չափաքանակի աղյուսակի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-րդ, 7-րդ, 9-րդ, 12-րդ, 17-րդ, 18-րդ, 20-րդ, 21-րդ, 23-րդ, 24-րդ, 27-րդ և 28-րդ կետերը.
- ուժը կորցրած ճանաչել N 2.1 հավելվածի N 2 չափաքանակի Ծանոթագրությունների՝ 1-ին, 2-րդ, 3-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ կետերը.
- N 3 չափաքանակի աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 20-26-րդ կետերով՝

«

20.	Կեպի գլխարկ	079	1 հատ	1
21.	Տակտիկական տաբատ (շալվար)	080	2 հատ	1

22.	Բաճկոն՝ սև գույնի	081	1 հատ	3
23.	Դասական կոստյում	082	2 հատ	3
24.	Տակտիկական կոշիկ	083	1 զույգ	2
25.	Երկարաթև սև վերնաշապիկ	084	1 հատ	1
26.	Կարճաթև սև մարտավարական վերնաշապիկ (պոլո)	085	1 հատ	1

».

- ուժը կորցրած ճանաչել N 3 չափաքանակի աղյուսակի 2-րդ կետը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության

վարչապետ **Ն. Փաշինյան**

2025 թ. ....

Երևան